465 Օրհնյալ Հիսուսի Սուրբ Հոգով լցված՝

1. Օրհնյալ Հիսուսի Սուրբ Հոգով լցված՝
Դու ցանի՛ր, ցանի՛ր սերմերը քո:
Պարարտ հողը քեզ մեծ արդյունք կտա,
Դու ցանի՛ր, ցանի՛ր սերմերը քո:
Ջրողներն էլ իրենց գործը ունեն,
Դու ցանի՛ր, ցանի՛ր սերմերը քո:
Տերն էլ անպայման կհատուցի քեզ,
Դու ցանի՛ր, ցանի՛ր սերմերը քո:

Սերմնացա՛ն, ցանի՛ր սերմերը քո
Ու հոգ մի՛ արա, թե ով կաճեցնի,
Ցանի՛ր հավիտենական խոսքեր՝
Տեր Հիսուսն այսպես մեզ պատվիրեց:

2. Մի քանիսը ճամփի կողքին կընկնեն,
Դու ցանի՛ր, ցանի՛ր սերմերը քո,
Իսկ մի քանիսն ապառաժին կընկնեն,
Դու ցանի՛ր, ցանի՛ր սերմերը քո:
Որոշ մասը կընկնի փշերի մեջ,
Դու ցանի՛ր, ցանի՛ր սերմերը քո.
Պարարտ հողում ընկնող սերմեր էլ կան,
Դու ցանի՛ր, ցանի՛ր սերմերը քո: